

ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի հայցորդ

ԴԱՏԱԿԱՆ ՆԱԽԱԴԵՊԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (ԱՆԳԼԻԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Սույն գիտական հոդվածում հանգամանորեն դիտարկվում է դատական որոշման պատճառաբանական մասը: Վերլուծվում և մեկնաբանվում են գործերի լուծումների համար անհրաժեշտ բոլոր գործողություններն ու եղանակները:

Միաժամանակ, դատական նախադեպը նկարագրվում է դեղուկտիվ և ինդուկտիվ տեսանկյունից: Հատուկ շեշտադրվում են համանմանությամբ (անալոգիայով) և հետևաբանությամբ (սիլլոգիստական ձևով) կայացված դատական որոշումները: Ներկայացվում են նաև որոշ դեպքեր, որոնց կապակցությամբ բացակայում են նախադեպային գործեր: Նկարագրվում է դրանց հետևանքները:

Հիմնարարեր՝ դատական որոշում, նախադեպ, մերողաբանություն, դեղուկցիա, ինդուկցիա, դատական պատճառաբանություն, սիլլոգիզմ, անալոգիա:

Պետության և իրավունքի տեսության ու պատմության գիտությունը դատական նախադեպին տալիս է կենտրոնական դեր, քանի որ իրավական նորմերը, որոնք ևս հանդիսանում են իրավունքի հիմնական աղբյուր և կազմում են գործող օրենքների հիմնատարրը, բավարար կերպով չեն վերահսկում դիմամիկ սոցիալական հարաբերությունները: Այստեղից էլ լրացնությունը վերահսկող դեր է կատարում դատական նախադեպը:

Հետևաբար, նպատակ հետապնդելով բնութագրել դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր, անհրաժեշտ է սահմանել դատական նախադեպի նշանակությունը, բացահայտել նրա կառուցվածքը, բովանդակությունն ու հիմնական հատկանիշները, տարրերակել վերջինիս «դատական պրակտիկա» հասկացությունից, հետազոտել դատական նախադեպի՝ որպես իրավունքի աղբյուրի տեղը իրավական համակարգում և պարզել միշտարք այլ նշանակալից հարցեր:

Անդրադառնալով ընդհանուր իրավունքի համակարգի՝ գիտնականներն ուսումնասիրությունների հետևանքով հանգել են այն եզրակացության, որ դատական որոշումների պատճառաբանություններում դատավորները պարտավոր են տարրերակել դրանց (հիմնավորման համար) անհրաժեշտ և հավելյալ նշված հատվածները: Ընդ որում, ըստ վերջիններիս, հենց ձեռք բերված փաստերի վերլուծությունն ու ներկայացված պատճառաբանություններն՝ են կազմում նշված գործողության կատարման կարևոր հիմքը:

Դատարանի իրավական պատճառաբանությունը (մերողաբանությունը) կարող է նկարագրվել դեղուկտիվ կամ ինդուկտիվ եղանակներով: Այս-

տեղ չպետք է հանգել այն եզրակացության, որ համանմանության միջոցով պատճառաբանելու ընթացակարգը պետք է կատարվի նախադեպի դոկտրինային համապատասխան²: Նախադեպի դոկտրինային լիովին համապատասխանող որոշումները հաճախ կայացվել են հենց դատավորների եզրահանգումների հետևանքով, և այդ իսկ պատճառով իրավունքի ռեալիստական դպրոցն ուշադրություն է դարձրել դատական գործընթացի կարևոր առանձնահատկությանը:

Այս կապակցությամբ հարկ է ներկայացնել դատական պատճառաբանության հաճախակի հանդիպող օրինակ: Հաշվի առնելով այն հանգանքը, որ փաստերի վերաբերյալ դատական գործերը տարաբնույթ են և առանձնահատկություններով լի, ուստի հնարավոր է սահմանափակվել իրավունքին անդրադառն պատճառաբանությամբ:

Այն հարցը, թե արդյո՞ք անձի վարքագիծը համապատասխանում է որոշակի չափանիշների, ինչպես օրինակ՝ խելամիտ մարդուց ակնկալվող խնամքը կամ հոգատարությունը, որոնց միջոցով կարելի է լուծել քաղաքացիական բացքողումներին վերաբերվող որոշ խնդիրներ, երբեմն համարվում է իրավունքի մաս: Քննարկվող գործերի առարկաների վերաբերյալ դատական պատճառաբանությունը պարունակող որոշումները չեն հանդիսանում նախադեպեր, միանման գործերի դեպքում դատավորները կարող են համեմատություն անել վերջիններիս միջև, սակայն նույնիսկ այդ գործողությամբ չեն հանդիսանում որևէ կերպ պարտավորված:

Դատական պատճառաբանության ցանկացած նկարագրություն՝ որպես դեղուկտիվ, հիմնականում կատարվում է փաստարկների սիլլոգիզմի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

(հետևաբանության) նպատակահարմարությամբ: Այն լավագույն կերպով արտացոլվում է գործի փաստերի նկատմամբ ստատուտի կիրառման միջոցով:

Օրինակ, արդյո՞ք դեղուկտիվ պատճառաբանություն է հետևյալը. «...բոլոր տղամարդիկ մահկանացու են, Սոկրատեսը տղամարդ է, հետևաբար Սոկրատեսը մահկանացու է»: Սա, փաստացի, եզրակացություն է, քանի որ հաստատված փաստ է, որ Սոկրատեսը նույնպես մահկանացու է: Այսինքն՝ այստեղ անհրաժեշտ չէ հղում կատարել մի շարք իրավական կանոններին:

Գոյություն ունեն դեղուկցիայի որոշ թեստեր, որոնք գործում են իրավական կանոնների կիրառման հետևանքով կայացրած եզրակացությունների նկատմամբ: Եթեմն վերջիններիս կիրառումը դժվարություն է առաջացնում: Այսպիսով, իրավական կանոնի վրա հիմնված սիլլոգիզմի վավերականության սոուզման ժամանակ կարող է առաջանալ որոշակի դժվարություն, քանի որ այն առաջադրում է հետևյալ հարցը՝ արդյո՞ք եզրակացության մերժում հանգեցնում է այս կամ այն դրույթի մերժմանը: Եթե եզրակացության մերժումը չի հանգեցնում մեկ կամ մի քանի այլ դրույթների մերժման, ապա պատճառաբանությունը համարվում է պայալ: Սակայն, այն առարկությունը, որ թեստը չի կարող հեշտությամբ կիրառվել իրավական պատճառաբանության կոնկրետ տեսակի նկատմամբ, կարող է արվել իրավական կանոնների չիրականացվող բնույթին նպաստելու միջոցով՝ համապատասխան դրույթները ձևակերպելիս:

Դա պետք է տեղի ունենա նաև ելեկով այն փաստից, որ իրավական կանոնների մեծամասնության գործողության ոլորտն անորոշ է: Սովորաբար գոյություն ունի այնպիսի գործերի պահպանողական փոքրամասնություն, որոնց նկատմամբ դրանք կիրառելի են, սակայն, հաշվի առնելով դրանց անորոշությունը, անխուսափելի լիրեն, որոշակի կասկած է առաջանում: Պահպանողական փոքրամասնությունը հազվադեպ հանդիպող երևույթ է, ուստի օրենքի վերաբերյալ դատական պատճառաբանության առարկա կարող է դառնալ միայն արտակարգ դեպքում, քանի որ դա առաջացնում է փաստերին վերաբերող հարցեր: Անորոշ գործերը հղում են կատարում օրենքի վերաբերյալ դատական պատճառաբանությանը: Ինչ վերաբերում է նրանց կողմից որպես դեղուկտիվ դասվող պատճառաբանության մեկնաբանմանը, ապա այստեղ առաջանում է բյուրիմացություն: Նշվածի պատճառն այն է, որ որոշումը կայացվում է մինչև պատճառաբանության կողմից սիլլոգիզմական ձև ձեռք բերելը:

Սիլլոգիզմը ձևավորվում է ոչ միայն փաստերի հայտնաբերվելուց հետո, այլ նաև կանոններին վերաբերող ցանկացած իրավական խնդրի լուծումից հետո: Եթե դատական որոշումը հիմնված է նախադեպային իրավունքի վրա, առանց որևէ ստատուտի հղում կատարելու, պատճառաբանությունը կարող է ներկայացվել սիլլոգիզմական ձևով⁴: Եթե դատավորը որոշում է կայացրել համապատասխան կանոնի ուժով, ապա այդ որոշման սահմանները և փաստերը, ինչպես նաև դատավորի եզրակացությունների վավերականությունը կարող են հաստատվել սահմանված ձևով դեղուկցիայի միջոցով: Սույն դեպքում սիլլոգիզմը սպառված է: Եթե ստատուտների կամ նախադեպերի կիրառությանն անդրադարձ է կատարվում պատճառաբանության ներկայացման փուլից հետո, ապա պատճառաբանության սպառվելը չի փոխում վերջինիս էականութեան դեղուկտիվ լինելու փաստը: Նման իրողություն չէր կարող առաջանալ, եթե դեղուկտիվ պատճառաբանությունը գործածվեր իրավական փաստարկի ավելի վաղ փուլում: Այն կարող էր գործածվել և խորհրդատուի փաստարկների տրամադրանական սխալները, և՝ նախորդ գործում դատական պատճառաբանությունը բացահայտելու նպատակով, բայց այս հնարավորությունները որևէ կերպ չէին փոփոխի իրավական պատճառաբանության վրա նախադեպային իրավունքի և մասնավորապես՝ նախադեպայի դոկտրինայի ազդեցությունը:

Այն գաղափարը, որ օրենքի մասին դատական պատճառաբանությունը կարող է ճիշտ նկարագրվել որպես ինդուկտիվ, բխում է այն փաստից, որ դատավորն իր գործի որոշման համար հաճախակի է հղում կատարում մեկ կամ մի քանի նախորդ որոշումների կանոններին: Եթեմն նա ինքնուրույն է ձևակերպում որոշակի կանոն և միայն այնուհետ հղում կատարում անցյալ գործերին՝ սոուզելու նպատակով: Առաջին ընթացակարգը կարող է նմանվել գիտական ինդուկցիայի, որտեղ մասնավոր դեպքերից ձևակերպվում է ընդհանուր առաջարկություն կամ պնդում, իսկ երկրորդ ընթացակարգը կարող է նմանվել երկրորդական ինդուկցիայի, որի միջոցով մասնավոր դեպքերն ուսումնասիրվում են արդեն իսկ ձևակերպված ընդհանուր առաջարկության կամ պնդման վավերականության հաստատման կամ մերժման տեսքով:

Թեև նախադեպային իրավունքը հաշվի առնող դատական պատճառաբանության և ինդուկտիվ ընթացակարգերի միջև համանմանությունը բավականին պարզ է, այնուամենայնիվ, դատական պատճառաբանության ինդուկտիվ նկարագրությունը հստակ արտացոլում է դրանց միջև տարբե-

բությունները: Գիտության տեսանկյունից տվյալ դեպքը երբեմն համապատասխանում է ընդհանուր առաջարկության ձևակերպմանը կամ արդեն իսկ ձևակերպված կանոնի թեստավորմանը, քանի որ վերջինիս միջոցով է փորձարկվել այդ կանոնը: Իսկ դատական գործունեության տեսանկյունից նշված կանոնները նպատակ են հետապնդում աջակցել տվյալ գործով որոշում կայացնելուն:

Այն հարցին, թե արդյո՞ք օրենքի վերաբերյալ դատական պատճառաբանությունը դեղուկտիվ է, թե ինդուկտիվ, ընդհանուր առմամբ, հնարավոր չէ պատասխանել այն հիմնավորմամբ, որ ամենը կախված է գործի համապատասխան փուլից: Այնուամենայնիվ, ստատուտի կիրառման ժամանակ այն ընդունված է համարել դեղուկտիվ, իսկ նախադեպային իրավունքի կիրառման ժամանակ՝ ինդուկտիվ: Նույնիսկ այս ընդունված մոտեցումների համար գոյություն ունեն երկու հիմնավոր առարկություններ: Առաջին առարկությունը կայանում է նրանում, որ նախադեպային գործերի, որտեղ արդեն իսկ կիրաված է ստատուտը, և դեղուկտիվ պատճառաբանությամբ դեպքերի միջև գոյություն ունեցող նմանություններն ավելի շատ են, քան նախադեպային իրավունքի և ինդուկտիվ պատճառաբանության միջև: Երկրորդ առարկությունն այն է, որ ստորաբար դեղուկտիվ համարվող պատճառաբանությունը նախադեպային իրավունքի կիրառման ընթացքում կատարում է այն դերը, ինչը որ ստատուտի կիրառման ընթացքում:

Նախադեպային գործում համանմանությամբ ներկայացված պատճառաբանությունը տեսականորեն կարելի է բաժանել երեք փուլերի: Առաջինը, նախսառաջ, նախորդ՝ նախադեպային, և ներկա՝ քննվող, գործերի միջև նմանությունների համապատասխանությունն է: Երկրորդը նախորդ գործի ratio decidendi-ի բացահայտումն է, իսկ երրորդը՝ քննվող գործում այդ ratio-ի կիրառումը կամ մերժումը: Երկրորդ փուլում համանմանությունը չի կատարում որևէ դեր: Այն, ըստ ամենայնի, բնորոշ է առաջին փուլին և հատկապես որոշիչ է երրորդ փուլում, որտեղ դատավորը պետք է հաշվի առնի նախորդ նախադեպային գործի և ներկայում քննվող գործի փաստերի միջև նմանությունները, որոնց առկայության շնորհիվ առաջանում է նախորդ գործի ratio decidendi-ի կիրառման անհրաժեշտությունը: Առանձնահատկություններ պարունակող դատական պատճառաբանությունը կարող է լուծել քննվող գործը նախորդ գործի ratio decidendi-ի կանոնին ոչ համապատասխան: Երկու գործերի տարբերություններն և նմանությունները հաստատելուց հետո, ինչպես նաև նախորդ գործի ratio decidendi-ն

բացահայտելուց հետո դատարանը կարող է որոշել, որ սույն դեպքում այս ratio decidendi-ն ենթակա չէ կիրառման: Նման որոշմանը հնարավոր է հաճախ այլ կամ այլ կանոնի դրույթների շնորհիվ:

Անդրադառնալով համանմանությամբ պատճառաբանության երեք հիմնական փուլերին, նախորդ գործի և դատարանում քննվող գործի միջև համապատասխան նմանությունների կամ տարբերությունների հաստատումը մեծամասամբ կախված է ընդհանուր համատեքստից: Եթե դատավորը գործը լուծում է նախսին գործով դատավորի կողմից օգտագործված բառերի ազդեցության ներքո, ապա հարկ է նշել, որ բառերը չպետք է լինեն որոշիչ և ստորաբար չեն հանդիսանում այդպիսին: Վերոհիշյալ համանմանությամբ դատական պատճառաբանությունն ամբողջական չէ, քանի որ պատճառաբանությունը ստորաբար վերաբերվում է մեկից ավելի անցյալ որոշումներին: Այն դեպքում, եթե ներառված են մի քանի որոշումներ, պատճառաբանությունը կազմված է չորս փուլից՝

1. քննվող գործի և մի շարք նախսին գործերի նմանությունների հաստատումը (որոնք հաճախ կարող են հակասել),

2. նախորդ գործերի rationes decidendi-ի հայտնաբերումը,

3. այդ rationes-ից կանոնի կամ կանոնների կառուցվածքի հետազոտումը,

4. քննվող գործի նկատմամբ այդ կանոններից մեկի կիրառման հարցի որոշումը:

Այս տեսակի պատճառաբանությունը երբեմն կարող է դառնալ չափազանց սահմանափակ և առաջացնել ոչ ցանկալի հետևանքներ:

Համանմանությամբ դատական պատճառաբանությունը հանգեցնում է որոշակի հայեցակարգային մոտեցման: Պատճառաբանության երրորդ փուլում նշված գործուներն ունեն չափազանց սահմանափակող ազդեցություն: Օրինակ՝ դատավորը կարող է հաշվի չառնել իր որոշման սոցիալական հետևանքները, որոնք պետք է հաշվի առնեն նախորդ գործի ratio decidendi-ն կիրառելու հարցը որոշելիս: Համանմանությամբ պատճառաբանության ճախողման հնարավորություն հետազայտվ կարող է առաջանալ գործերում օգտագործված բառերի և արտահայտությունների հետևանքով: Ցուրաքանչյուր դեպքում, սխալ է անտեսել մի համատեքստ, որտեղ օգտագործվել են որոշակի արտահայտություններ և բառեր:

Եթե քննարկվող իրավական գործը չունի նախադեպ, դատավորը չպետք է գործը լուծի՝ առաջնորդվելով միայն իր հայեցողությամբ: Այն որոշումը, որը պարզապես հիմնվում է փաստարկների

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վրա, եզրափակվում է արդարության, բարոյականության կամ հասարակական շահերի շափանիշներով և կարող է դիտարկվել որպես առավել արդյունավետ լուծման մեթոդաբանություն:

Անգլիայում ժամանակակից դատավորի համար առանց նախադեպի առկայության որոշում կայացնելը չի համարվում սովորական երևոյթ, քանի որ նա առնչվում է նոր իրավական հարցի հետ: Դատավորի համար ընդունված ընթացակարգ է գործով յուրաքանչյուր կողմի համար «կողմ ու դեմ» հանգամանքները հաստատելը և որոշման կայացման հիմքում դրված սկզբունքի ձևակերպելը:

Այն դեպքում, եթե գործնականում չի եղել համապատասխան նախադեպ, դատավորը հաշվի է առել որոշման հնարավոր հետևանքները և գործը լուծել հայցվորի օգտին:

Եթե դատավորը իսկապես հաշվի է առնում գործով յուրաքանչյուր կողմի «կողմ ու դեմ» հանգամանքները, պատճառաբանությունը ձեռք չի բերում որևէ անվանում, սակայն պարունակում է այնպիսի առանձնահատկություններ, որոնց միջոցով տարբերակվում է դեղուկցիայից և ինդուկցիայից: Նշվածը չի վերաբերում փաստերին վերաբերող հարցերի պատճառաբանություններին: Դատավորը պարտավոր է հաշվի առնել իր որոշման հնարավոր սոցիալական հետևանքները, միաժամանակ նա պարտավոր է իր որոշումը հիմնավորել գոյություն ունեցող իրավական սկզբունքներով, էական նշանակություն ունեցող փաստարկներով և այլն:

Նախադեպ չունեցող գործով որոշումը, սովորաբար, արտացոլում է դատարանի ինքնուրույն տեսակետները, որոնք հնարավորինս վերաբերում են գործի հնարավոր հետևանքներին, այլ ոչ առանձնահատուկ փաստերին: Նույնիսկ, եթե դատական պատճառաբանությունը հիմնված է որոշ անկախ նախադրյալների ընդհանուր ազդեցության վրա, ապա դատավորն անխուսափելիորեն կիմնավորի իր որոշումը «կողմ ու դեմ» փաստարկներով: Թեև համանմանությամբ պատճառաբանությունը բնորոշ է այն գործերին, որտեղ գոյություն ունեն նախադեպեր, պատճառաբանություն՝ անկախ նախադրյալների ազդեցությունից, բնութագրական է այն գործերին, որտեղ չկա նախադեպ: Դրանք փոխադարձաբար չեն բացառում մեկը մյուսին: Գործնականում նախադեպային գործերը գերակշռում են, հակառակ դեպքում՝ անուղղակիորեն կապված գործերը նույնպես կարող են ծառայել որպես նախադեպ: Հարցերի պարզաբանման համար կարևոր են նախորդ գործերը, իսկ երեմն նաև dicta-ն, թեև վերջնականության տեսանկ-

յունից միայն պատճառաբանությունն է էական:

Համանմանությամբ պատճառաբանությունը stare decisis սկզբունքին և Անգլիայի նախադեպի դոկտրինային բնորոշ արդյունք է: Այն հանգեցնում է կանոններ ստեղծող որոշումների կայացմանը և սահմանափակում պատճառաբանության ասպարեզը: Եթե գործը վերաբերում է որոշակի կանոնների, ապա նախադրյալներն անխուսափելիորեն ավելի քիչ են: Համանմանությամբ պատճառաբանության հիմնական խնդիրները չեն կարող կասկածի տակ դնել stare decisis սկզբունքը: Գոյություն ունի նաև երկու կարևոր հարց, որոնք առաջանաւ են նախադեպի դոկտրինայի միջոցով: Առաջին դեպքում կարող է լինել այն փաստի քողարկման հնարավորություն, որ իրականում կոնկրետ որոշման համար չի ներկայացվել որևէ պատճառաբանություն: Այդպիսի որոշումներից են, օրինակ, միայն հավաստիացման վրա հիմնվածները, որտեղ ձևակերպումը էականորեն չի տարբերվում առանց պատճառաբանության որոշումից: Որոշումը կարող է էականորեն չտարբերվել առանց պատճառաբանության որոշումից նաև այն ժամանակ, եթե միայն հղում է կատարում հակասող գործերին և հայտարարում, որ դրանցից որոշները կվիրառվեն կամ, համապատասխանաբար, չեն կիրառվի տվյալ դեպքում: Այսպիսի գործերում նման ընթացքի ընդունման համար չի տրվում որևէ ուղեցույց:

Հարկ է մատնանշել, որ վերոնշյալ դեպքերը, այսինքն՝ նման որոշումները, բացառություն են կազմում:

Երկրորդ դեպքը ծագում է այնպիսի իրողությունից, եթե նշվում են բոլոր պատշաճ գործերը, սակայն հետագայում պարզվում է, որ անտեսվել են հակասական որոշումները, ինչն ընդգծում է ծագած հակասությունը քողարկելու մտադրությունը:

- ¹ St'iu, Դավիդ Բ., Ջոֆֆրե-Շպինոզ Կ., Օսновные правовые системы современности, М., 2003, С. 258.
- ² St'iu, Մանրամասն տեղ, Jackson R., The Machinery of Justice in England, Cambridge, 1997, Holmes O. W., The Common Law, Boston, 1938, Tate N., Judicial institutions in cross-national perspective: toward integrating courts into the comparative study of polities, Oxford, 1981, Capuletti M., The Law-making Power of the Judge and its Limits, A Comparative Studies, Monash University Law Review, 1981, No 8, Williams G., Learning the Law, L., 1972, Carleton Kemp Allen, Law in the making, 7th ed., Oxford University Press, 1966, Alan Watson, Sources of Law, Legal Change, and Ambiguity, University of Pennsylvania Press, Philadelphia, 1984, Andrew Ashworth, The Binding Effect of Crown Court Decisions, Criminal Law Review, 1980:
- ³ St'iu, H. L. A. Hart, Proceedings of the Aristotelian Society, Volume 49, Issue 1, 1949, էջ 171:
- ⁴ St'iu, Հակոբյան Ա., Դատական նախադեպի հույրունը և առանձնահատկությունները. Պատմատեսական և լրագրականական հիմնախնդիրներ, մենագրություն, 2017, Եվրոպիան, Երևան, էջ 58, 70:
- St'iu, Cross R. and Harris J., Precedent in English Law, Fourth Edition, Clarendon Press-Oxford, 2004, էջ 200-201:

Anna Akobyan

Соискатель института философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

Основные методологические задачи интерпретирования судебного precedента (на примере Англии)

В данной научной статье детально рассматривается аргументация судебного решения. Анализируются и освещаются все необходимые действия и способы разрешения дел.

Одновременно описывается судебный precedent с позиции дедукции и индукции. Особо выделяются судебные решения вынесенные путем сходства (аналогии) и логического заключения (силлогизма). Также приводятся некоторые случаи, не имеющие precedентных дел. Описываются их последствия.

Ключевые слова: судебное решение, precedent, методология, дедукция, индукция, судебная аргументация, силлогизм, аналогия.

Anna Hakobyan

Applicant of the Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA

SUMMARY

Methodological problems of interpreting the judicial precedent (on the example of England)

In the following scientific article, the reasoning part of judicial decision is thoroughly considered. All the actions and methods required for solutions of cases are analyzed and interpreted.

In the mean time, the judicial precedent is described in deductive and inductive points of view. Special emphasis is placed on the judgments made by similarity (analogy) and logical conclusion (in the syllogistic manner). Certain cases are also presented, in respect of which there are no precedents. Their effects are described.

Key words: judicial decision, precedent, methodology, deduction, induction, judicial reasoning, syllogism, analogy.